Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 14

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Մովսիսյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Օվոյանը, Մ. Տաշչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Գ. Եղիազարյանն ու Վ. Սաֆարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ա. Ոսկանյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը, Ս. Ղազարյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետներ Ս. Սահակյանը, Մ. Յաշչյանը, Ա. Արամյանը, լրագրող Լ. Գարանյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

5. ՀՀ Արագածոտնի մարզպետարանին համակարգիչ նվիրելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան /

/1/ Օրակարգը հաստատվել է 10 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցողը հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամներն արդեն ծանոթ են բյուջեի կատարման վիճակին և առկա թվերին, զեկուցումը կատարեց սեղմ տարբերակով:

Նա հայտնեց, որ 2017 թվականի բյուջեն կատարվել է հարյուր տոկոսով, որն էլ հնարավորություն է տվել ժամանակին ֆինանսավորելու այն աշխատանքները, որոնք իրականացվել են ընթացքում:

Զեկուցման վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին նիստին ներկա ավագանու բոլոր անդամները, որոնց պատասխանեցին Թ. Շահվերդյանը, Գ. Եղիազարյանը և Ա. Արամյանը:

Ստանալով սպառիչ պատասխաններ, ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել 2017թ. բյուջեի կատարողականը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 3</u> - Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեն ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Բաժնի պետը միաժամանակ նշեց, որ դեկտեմբեր ամսին, բյուջեի քննարկումների ժամանակ մանրամասն անդրադարձել է այն բնագավառներին և ֆինանսական միջոցներին, որոնք տեղ են գտել 2018թ. բյուջեի նախագծում: Զեկուցողն անդրադարձավ նաև այն հարցերին, որոնք վերաբերվում են ավագանու անդամների կողմից արված առաջարկություններին: Արձանագրվեց, որ դրանց զգալի մասը ներառվել են բյուջեի ներկայացված տարբերակում:

Զեկուցողը նշեց նաև, որ ներկա քննարկումը կատարվում է այն նպատակով, որպեսզի 2017 թվականի բյուջեի վարչական մասի ազատ մնացորդը /շուրջ 16 մլն/ տեղափոխվի 2018 թվականի բյուջեի ֆոնդային մաս:

2018 թվականի բյուջեի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնեցին, ելույթ ունեցան և որոշակի հարցեր բարձրացրեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Սարգսյանը և Ն. Անդրեասյանը:

Հարցերին պատասխանեցին, Թ. Շահվերդյանը, Գ. Եղիազարյանը և Շ. Վահանյանը:

Քվեարկությունից առաջ ավագանու անդամներն իրենց խոսքում հայտնեցին այն միտքը, որ հավատում են ասվածը գործ դարձնելու ծրագրերի կատարմանը: Դրա համար հիմք են հանդիսանում 2017 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների ծավալները:

Քվեարկության արդյունքում որոշումն ընդունվեց միաձայն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 4</u> - Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Նա նշեց, որ Աշտարակ քաղաքի Արարատյան փողոցի N 70 և Աշտարակի խճուղի N 9 հասցեներում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման և սպասարկման համար առանձնացված, համապատասխանաբար 0.2131հա և 0.24958հա հողամասերը ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի N 1398-Ն որոշմամբ սխալմամբ հանձնվել է Աշտարակ համայնքին: Սխալն ուղղելու և անշարժ գույքի պահպանումն ու սպասարկումն ապահովելու համար առաջարկվում է համաձայնություն տալ նշված հողամասերը /հատակագծերը կցվում է/ անհատույց նվիրելու Հայաստանի Հանրապետությանը:

Զեկուցողին ուղղված հարցերին պատասխանեցին համայնքի ղեկավարն ու բաժնի պետը:

Պարզաբանումներ լսելուց հետո այլ առաջարկություններ և առարկություններ չեղան:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - ՀՀ Արագածոտնի մարզպետարանին համակարգիչ նվիրելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ կար նախնական պայմանավորվածություն, մարզպետարանին մեկ հատ համակարգիչ նվիրելու հարցում, որի հետ կապված էլ ընդունվել է համայնքի ղեկավարի 29.12.2017թ. N 399-Ա կարգադրությունը: Փաստն օրինական կարգով ձևակերպելու համար հարցը ներկայացվել է ավագանու հաստատմանը, հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/21 հոդվածի պահանջները:

Խնդրի հետ կապված որոշակի պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քննարկումից հետո ընդունվեց որոշում:

10 - ԿՈՂՄ ՉԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ և Աշտարակ քաղաքի 02-001-0353-0001 ծածկագրով 0.3098հա գյուղ. նշանակության հողամասից 0.0242հա-ի նշանակությունը փոխելու անհրաժեշտության և նպատակահարմարության մասին խոսեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը:

Նա նշեց, որ փոփոխությունը /գյուղատնտեսականը բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման/ չի հակասում ոչ գործող օրենսդրությանը, ոչ էլ ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներին /իրադրության հատակագիծը կցվում է/:

Լրացուցիչ պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

10 - ԿՈՂՄ ՉԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2018 թվականի հունվարի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՋԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ
ՏՊ
Ա.Հ.